ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 61-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հակոբ Միքաելյանի 2024 թվականի փետրվարի 1-ի թիվ 625 զեկուցագիրը. որոշում եմ՝

1. Յուրի Կարենի Սահակյանի նկատմամբ 2024 թվականի հունվարի 5-ին հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում azdarar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2024թ. փետրվարի 1
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 62-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 453-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, որոշում եմ.

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը հաստատելու մասին» թիվ 453-Ա որոշմամբ հաստատված թիվ 4 հավելվածում կատարել փոփոխություն.

1) հավելվածի առաջին սյունյակում՝ «Մարզի ՔՊ պետ Էդվարդ Հովհաննիսյան Հեռ. 094 42 40 45» բառերի փոխարեն կարդալ «Մարզի ՔՊ պետ Դավիթ Խուդաթյան Հեռ. 055 77 88 99» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2024թ. փետրվարի 2
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 թվականի N 63-Ա

ԳՐԻԳՈՐ ԶԱՎԵՆԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2023 թվականի հոկտեմբերի 25-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի հոկտեմբերի 2-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023REQZJY), հողամասի սեփականատեր Գրիգոր Զավենի Սիմոնյանի 2023 թվականի նոյեմբերի 20-ի N 5485 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Նորակերտ գյուղի Վ. Տերյան փողոց թիվ 7 հասցեում գտնվող Գրիգոր Զավենի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող 04-074-0024-0010 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 36.3 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 4.4 քառակուսի մետր արտաքին մակերեսով թոնրատունը, 9.9 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ՍԵՎԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան համար կազմում է 1422 դրամ, 1 քառակուսի մետր թոնրատան, անասնաշենքի

համար կազմում է 859,2 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 63 905,16 (վաթսուներեք հազար ինը հարյուր հինգ դրամ, տասնվեց լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Նորակերտ գյուղի 900325181155 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2024 թ. փետրվարի 02
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 թվականի N 64-Ա

ԿԱՐԻՆԵ ԼԵՎՈՆԻ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ, 0,01 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՄԵԿ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի հունվարի 4-ի N 01/7/00016-2024 գրությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի հունվարի 3-ի N 01/11.1/17641-2024 գրությունը, «Ա.Ռ.Մ. ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2022 թվականի դեկտեմբերի 14-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 8-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքները (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022WTNKLW և 2022PYQARR), հողամասի սեփականատեր Կարինե Լևոնի Քոչարյանի 2023 թվականի նոյեմբերի 29-ի N 5666, 2024 թվականի հունվարի 15-ի N 190 և 191 դիմումները. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Մ. Նալբանդյան փողոցի 5/1 հասցեում գտնվող Կարինե Լևոնի Քոչարյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0109-0041 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման 100 քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել որպես հասարակական կառուցապատման հող:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն, սույն՝ 100 քառակուսի մետր մակերեսով հողամասը, հանել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի հաշվեկշռից և ներառել բնակավայրերի նպատակային

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Երևանյան փողոց N 135 և Մ. Նալբանդյան փողոց N 5/1 հասցեներում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի միավորումից առաջացած անշարժ գույքին տալ մեկ միասնական հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Երևանյան փողոց N 135 գազալցակայան (ծածկագիր 04094GHVEHRY):

4. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Երևանյան փողոց 135 հասցեում գտնվող Կարինե Լևոնի Քոչարյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0109-0060 և 04-094-0109-0041 կադաստրային ծածկագրերով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի վրա կառուցված 44,18 քառակուսի մետր արտաքին մակերեսով գազալցակայանը, 72,0 քառակուսի մետր արտաքին մակերեսով ծածկը, 26,32 քառակուսի մետր արտաքին մակերեսով հակահրդեհային ջրավազանը, 21,8 քառակուսի մետր արտաքին մակերեսով նկուղը (գազի կուտակիչների հոր), 15,54 քառակուսի մետր արտաքին մակերեսով ծածկը, 66,7 քառակուսի մետր արտաքին մակերեսով ճնշակայանը, 7,23 քառակուսի մետր արտաքին մակերեսով տնտեսական շինությունը, 24,75 քառակուսի մետր արտաքին մակերեսով տնտեսական շինությունը, 10.0 քառակուսի մետր արտաքին մակերեսով տնտեսական շինությունը, 4,0 քառակուսի մետր արտաքին մակերեսով ճնշակայանը, 0,75 քառակուսի մետր արտաքին մակերեսով հակահրդեհային ջրավազանը և մեկ ինքնակամ բացված պատուհանը համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ԳԵՎՈՐԳ ՍՈՒՐԻԿԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

5. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր գազալցակայանի, ծածկերի, ջրավազանի, նկուղի, ճնշակայանի և տնտեսական շինությունների համար կազմում է 4632 դրամ, 1 ինքնակամ բացվածքի համար կազմում է 4632 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 1 363 058,64 (մեկ միլիոն երեք հարյուր վաթսուներեք հազար հիսունութ դրամ վաթսունչորս լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

6. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2024 թ. փետրվարի 02

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 թվականի N 65-Ա

ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի բաժանման սխեման տրված 2023 թվականի դեկտեմբերի 14-ին «ՉԱՓԱԳՐՈՒՄ ԷԼԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից, 2024 թվականի հունվարի 25-ին տրված անշարժ գույքի մասի նվիրատվության պայմանագիրը (գրանցամատյան թիվ 503) և քաղաքացի Խաչատուր Վահագի Եղիազարյանի կողմից 2023 թվականի նոյեմբերի 22-ին տրված լիազորագիրը (գրանցամատյան թիվ 502), Խաչատուր Վահագի Եղիազարյանի լիազորված անձ Հայկ Անդրանիկի Ապրեսյանի 2024 թվականի հունվարի 30-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի վարչական սահմաններում գտնվող Խաչատուր Վահագի Եղիազարյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0030-0004 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կողմ 1-ին (առանձնացվող հատված 1) 0.06109 հեկտար մակերեսով հողամասին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Վ. Սարգսյան 1-ին փողոց, N 2 բնակելի տուն:
2. Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին (առանձնացվող հատված 2) 0.03993 հեկտար մակերեսով հողամասին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Վ. Սարգսյան 1-ին փողոց, N 2/1 բնակելի տուն:
3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2024 թ. փետրվարի 05
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 թվականի N 66-Ա

ՀԱՐԱՁԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի թիվ 39-Ա որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետով և հիմք ընդունելով Փարաքար համայնքի բնակիչների դիմումները՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ընտանիքի անդամին կորցրած բնակիչներին ցուցաբերել 120 000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական, գնումների, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնին՝ կատարել համապատասխան ձևակերպում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2024 թ. փետրվարի 6
գ.Փարաքար

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի

Փարաքար համայնքի ղեկավարի

2024 թվականի փետրվարի 6-ի

թիվ 66-Ա որոշման

Ցուցակ

Հարազատին կորցրած ընտանիքիների դրամական օգնություն ստացողների

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	հասցեն	Գումարը /ՀՀ դրամ/	Անձնագրի տվյալները
1.	Խաչատրյան Ալբերտ Վլադիմիրի	Գ.Պտղունք	40 000	AU 0600829 տրված 01.02.2022 թ., 057- ի կողմից ՀԾՀ 2408690110
2.	Համբարյան Պետրոս Հարությունի	Գ.Մուսալեռ	40 000	AU 0600829 տրված 01.02.2022 թ., 057- ի կողմից ՀԾՀ 2609710186
3.	Հակոբյան Համլետ Լիպարիտի	Գ.Փարաքար	40 000	ՆՔ 007904436, տրված 08.07.2015 թ., 001-ի կողմից,ՀԾՀ 2801680095
	Ընդամենը			120 000 դրամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԳԱՅԱՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 67-Ա

2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂԻՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 68-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 83-Ա և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 767-Ա որոշումները, 2024 թվականի փետրվարի 1-ի ԳԱ 04-24 ծածկագրով հողամասն աճուրդով վաճառելու մասին թիվ 4/1 և աճուրդի արդյունքների մասին թիվ 4/2 արձանագրությունները՝ ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի, Նորակերտ գյուղում գտնվող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության, 04-074-0107-0156 կադաստրային ծածկագրով, 0,9311 հա մակերեսով այլ հողատեսք, վարելահող գործառնական նշանակության /0,8735 հա այլ, 0,0576 հա վարելահող/ հողամասն օտարել 2024 թվականի փետրվարի 1-ին կայացած աճուրդում հաղթող ճանաչված Լյուդվիգ Արմենակի Մանուկյանին:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին՝ աճուրդով գնված հողամասի վճարման ենթակա գումարի /սահմանված ժամկետում ու կարգով/ վճարումները կատարելուց հետո աճուրդում հաղթող ճանաչված Լյուդվիգ Արմենակի Մանուկյանի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3. Ընդունել ի գիտություն, որ աճուրդի անցկացման օրվանից հաշված տաս օրվա ընթացքում սակարկությունների արդյունքում ձևավորված գինը չվճարելու դեպքում աճուրդը կհամարվի չկայացած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2024թ. փետրվարի 6
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 թվականի N 68-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 621-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից տրված գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 2024 թվականի հունվարի 19-ի N Կ-19012024-04-0031 որոշումը և Վիրաբ Արզումանյանի ներկայացուցիչ՝ Հայկազ Գալստյանի 2024 թվականի հունվարի 31-ի թիվ 041 դիմումը ***որոշում եմ*** '

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 24-ի «Բնակելի տան նկատմամբ գույքային իրավունքները վերականգնելու մասին» N 621-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

1) Որոշման առաջին կետը «հողամասի նկատմամբ:» բառերից հետո լրացնել «04-074-0017-0034 կադաստրային ծածկագրով հողամասից 0,00413 հեկտար մակերեսով հողամասը թողնել որպես ընդհանուր օգտագործման, համաձայն «ԱՎԱԳ ԱՎԱԳՅԱՆ ԳԱԳԻԿԻ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հատակագծի:» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2024 թ. փետրվարի 06
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 թվականի N 69-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասերով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 2-րդ և 3-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 102-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի N 19-Ա որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի քաղաքացի Ռոբերտ Աղվանի Ավետիսյանի միջև 2006 թվականի մարտի 29-ին կնքված հողամասի վարձակալության 1430 պայմանագիրը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2024 թվականի հունվարի 19-ին տրված N ԱՏ-19012024-04-1160 տեղեկանքը և քաղաքացի Ռոբերտ Աղվանի Ավետիսյանի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 6294 և N 6295 դիմումները, ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղում գտնվող՝ 04-030-0037-0053 կադաստրային ծածկագրով, 0.1846 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասից 0.043 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ որպես բնակելի կառուցապատման հողամաս:

2. Ուղղակի վաճառքի ձևով Ռոբերտ Աղվանի Ավետիսյանին օտարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականությունը հանդիսացող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի Կոմիտասի փողոց 26/3 հողամաս հասցեում գտնվող՝

04-030-0037-0053 կադաստրային ծածկագրով հողամասից 0.043 հեկտար մակերեսով հողամասը, կադաստրային արժեքի չափով՝ 807 411 /ութ հարյուր յոթ հազար չորս հարյուր տասնմեկ/ Հայաստանի Հանրապետության դրամով, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի ֆոնդային եկամուտների 900325191139 հաշվեհամարին:

3. Լուծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան գյուղական համայնքի և Հայաստանի Հանրապետության քաղաքացի Ռոբերտ Աղվանի Ավետիսյանի միջև 2006 թվականի մարտի 29-ին Հայաստանի Հանրապետության Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Վրեժ Ղարիբյանի կողմից կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը:

4. Ռոբերտ Աղվանի Ավետիսյանի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2024 թ. փետրվարի 06

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 70-Ա

2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂԻՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 68-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 84-Ա և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 767-Ա որոշումները, 2024 թվականի փետրվարի 2-ի ԳԱ 05-24 ծածկագրով հողամասն աճուրդով վաճառելու մասին թիվ 5/1 և աճուրդի արդյունքների մասին թիվ 5/2 արձանագրությունները՝ ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի, Արևաշատ գյուղում գտնվող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության, 04-026-0200-0003 կադաստրային ծածկագրով, 0,4127 հա մակերեսով այլ հողատեսք, գործառնական նշանակության հողամասն օտարել 2024 թվականի փետրվարի 2-ին կայացած աճուրդում հաղթող ճանաչված Գևորգ Աշոտի Ներսիսյանին:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին՝ աճուրդով գնված հողամասի վճարման ենթակա գումարի /սահմանված ժամկետում ու կարգով/ վճարումները կատարելուց հետո աճուրդում հաղթող ճանաչված Գևորգ Աշոտի Ներսիսյանի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3. Ընդունել ի գիտություն, որ աճուրդի անցկացման օրվանից հաշված տաս օրվա ընթացքում սակարկությունների արդյունքում ձևավորված գինը չվճարելու դեպքում աճուրդը կհամարվի չկայացած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2024թ. փետրվարի 6
գ.Փարաքար